# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՌԻՄՆԱ ՍՊԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2023/5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | ՌԻՄՆԱ | ՌԻՄՆԱ | կիսավերարկու | ՌԻՄՆԱ ՍՊԸ | Գարնանային-աշնանային կիսավերարկու դեղնականաչավուն 4C5-KB-гл արտիկուլի կամ համանման անջրանցիկ դեղնականաչավուն գույնի կտորից, 1մ2 մակերասային խտությունը՝ 214գր., բաղադրությունը՝ 51% պոլիէսթեր, 49% բամբակ, տաք /սինտեպոնե/ ներդիրով: Թիկունքամասը մշակվում է կոկետկայով: Կիսավերարկուն կազմված է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից, թևքերից: Լանջափեշերը կոճկվում են 4 հատ 18մմ դեղնականաչավուն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | գույնի պլաստմասե կոճակ օղակներով, մշակված գաղտնի եզրաշերտի վրա: Լանջափեշերի վրա կողքերից ներկարված թեք գրպաններ, օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ: Մեջքը` մեջտեղի կարով, թևքերը երկկարանի ներկարված: Ձախ լանջափեշին ներսից մշակվում է կտրվածքով ծոցագրպան, որը կոչկվում է 1 պլաստմասե կոճակով և օղակով, ներսի կողմից կարվում է արտադրաքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Գոտկատեղի կողքերին կարված է 2 գոտեմակող: ՈՒնի գոտի պլաստմասե ճարմանդով և 2 գոտեմակող: ՈՒսադիրների շրջանում 2 փակ օղակներ և 2 կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Աստառը` մետաքսյա կամ համարժեք դեղնականաչավուն գույնի կտորոց: Ներդիրը` /թիկունքը և թևքերը/ սինտեպոն: Աստառը, մգդակված է սինտեպոնով, շեղանկյուն կարերով: Արտաքին տեսքը` համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Ապրանքը պետք լինի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պիտակավորված, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը`եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ` 1 հատ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն կիսավերարկուի չափսերին, որպեսզի կիսավերարկուն չճմրթվի: Արկղերը` պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը և տեխնիկական պայմանի համարը: Պատվիրատու պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ –ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | լաբորատոր հետազոտության եզրակացություն : |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

РИМНА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2023/5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | | |